



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Սանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
 հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. ասցեն՝ board@ysu.am, www.yasu.am

№ 003 «17» դեկտեմբերի 2021 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի

2021 թվականի դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 20-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստի սկզբում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Ս. Պապիկյանը նշեց, որ համաձայն ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի 4.1 կետի՝ ռեկտորի ընտրության համար գումարված նիստն անցնում է դռնփակ: Նա նշեց, որ օրակարգում ներառված է մեկ հարց՝ ԵՊՀ կառավարիչ-ռեկտորի ընտրություն:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար Ե. Կիրակոսյանն ասաց, որ ՀԽ առաջին նիստին հայտարարվել էր, որ դեկտեմբերի 17-ին անցկացվելու է ԵՊՀ կառավարիչ-ռեկտորի ընտրություն: Նա ասաց, որ նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ բաց է եղել հայտերի ընդունման գրանցամատյանը: Ե. Կիրակոսյանը փաստեց, որ այդ ընթացքում ստացվել է մեկ հայտ ԵՊՀ ռեկտորի ժ.պ. Հ. Հովհաննիսյանի կողմից՝ նշելով, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են պահանջվող չափորոշիչներին:

Ե. Կիրակոսյանն ասաց, որ ստացվել է ծանուցում, որ ևս մեկ հավակնորդի կողմից ներկայացվել է էլեկտրոնային, այնուհետև տպագիր դիմում, սակայն սահմանված ժամկետների խախտմամբ, այդ պատճառով էլ այն չի ներառվել գրանցամատյանում. այն արդեն կնքված է եղել:

ԵՊՀ ՀԽ քարտուղարը պարզաբանեց, որ ըստ կարգի՝ կառավարիչ-ռեկտորի թեկնածուն պետք է ներկայացնի ծրագիր, որից հետո ՀԽ անդամները կարող են հարցեր ուղղել նրան: Ե. Կիրակոսյանը տեղեկացրեց, որ պետք է հաշվիչ հանձնաժողով կազմավորվի՝ բաղկացած 5 անդամից, և իրականացվի փակ գաղտնի քվեարկություն:

ԵՊՀ ՀԽ անդամ Խ. Աբաջյանը նշեց, որ ըստ կանոնակարգի՝ նիստի օրակարգը պետք է հաստատել այնպես, ինչպես նշված է կարգում, և առաջարկեց այն հաստատել կարգով սահմանված կետերով: Ի պատասխան՝ Ս. Պապիկյանն ասաց, որ ներկայացված օրակարգը չի հակասում կարգին, բայց եթե կարիք կա, կարելի է կետ առ կետ քվեարկել:

ՀԽ անդամների հաստատմանը ներկայացվեց ԵՊՀ կառավարիչ-ռեկտորի թեկնածուի համապատասխանությունը, որի վերաբերյալ առարկություններ չհնչեցին:

Հաջորդիվ անցում կատարվեց ԵՊՀ կառավարիչ-ռեկտորի հավակնորդի ծրագրի ունկնդրմանը:

ԵՊՀ կառավարիչ-ռեկտորի հավակնորդ Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց Երևանի պետական համալսարանի զարգացման հեռանկարների և դրան ուղղված համալիր քայլերի ծրագիրը, որից հետո պատասխանեց ՀԽ անդամների հարցերին:

ՀԽ նիստին ելույթներով հանդես եկան ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ Մ. Գաբրիելյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կ. Թոչունյանը, ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ Ա. Փոլադյանը, Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրեն Մ. Հայրապետյանը և ՀԽ նախագահ Ս. Պապիկյանը:

Ելույթներից հետո անցում կատարվեց հաշվիչ հանձնաժողով ստեղծելուն: Ե. Կիրակոսյանը ներկայացրեց դրա ստեղծման ընթացակարգը՝ փաստելով, որ այն պետք է ապահովի նաև քվեարկության փակ գաղտնի ընթացքը:

Ս. Պապիկյանն առաջարկեց հանձնաժողովում ներառել երկուական ներկայացուցիչներ պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված և լիազոր մարմնի կողմից առաջադրված անդամներից և մեկ՝ ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամներից:

Առաջադրվեցին Եղիշե Կիրակոսյանի, Գոռ Օհանյանի, Կարեն Թոչունյանի, Նարինե Խաչատրյանի և Մխիթար Գաբրիելյանի թեկնածությունները, որոնցից յուրաքանչյուրը հաստատվեց քվեարկությամբ:

Հայտարարվեց փակ գաղտնի քվեարկություն, որի ավարտին Ե. Կիրակոսյանը ներկայացրեց արդյունքները: Ըստ այդմ՝ ՀԽ 20 անդամներից քվեարկությանը մասնակցել է 20 անդամ, բաժանվել է 20 քվեաթերթիկ: Քվեատուփում առկա է եղել 20 քվեաթերթիկ:

Հովհաննես Հովհաննիսյանին ԵՊՀ կառավարիչ-ռեկտոր ընտրելու արդյունքներն են. կողմ՝ 12, դեմ՝ 5, անվավեր՝ 3:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ և 58-րդ կետերի, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի 5-րդ կետի 5.17 և 5.18

ենթակետերի, Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 3.9 կետի, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. ԵՊՀ կառավարիչ-ռեկտոր ընտրել պատմական գիտությունների դոկտոր Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանին՝ հինգ տարի ժամկետով:

Ե. Կիրակոսյանը նաև տեղեկացրեց, որ անվավեր են ճանաչվել այն քվեաթերթիկները, որոնց մեջ համապատասխան վանդակից դուրս գրառում է եղել:

Հ. Հովհաննիսյանը փաստեց, որ իրենից կախված ամեն ինչ անելու է, որ ԵՊՀ-ն թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում ունենա իր արժանի տեղը՝ նշելով, որ արժևորում է կայուն, փոխգործակցային միջավայրի ձևավորումն ու համատեղ աշխատանքը:

Խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

Խորհրդի քարտուղար՝

Ե. Կիրակոսյան